## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ………………………………………………. 3

Թեստի նկարագիրը …………………………………… 6

Պատասխանների ձևաթուղթ ………………………… 16

Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը ……… 17

Խորհուրդներ և ցուցումներ ………………………… 18

Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը` լրացուցիչ 7500 օրինակ, 20 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
Գիրքը վաճառքի ենթակա չէ:
www.atc.am

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՆԳԼԵՐԵՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

## Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2011

ԳՄԴ 74.2+81.2 Անգլ
Ա 579

Կազմողներ՝ ՌՈՒԲԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱԹՈՅԱՆ
ՆԵԼԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՐԱՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Անգլերենի պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց

Ա 579 Անգլերենի պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց,-Եր.: Գնահատման և թեստավորման կենտրոն,2011.20 էջ:

Ուղեցույցում ներկայացված են անգլերենի պետական ավարտական և միասնական քննության թեստի նկարագիրը և առաջադրանքների նմուշներ: Նախատեսված է աշակերտների, ուսուցիչների և դիմորդների համար:

ԳՄԴ 74.2+81.2 Անգլ

ISBN 978-99941-864-9-5

© Գնահատման և թեստավորման կենտրոն, 2011թ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

պատասխանն իրոք ճիշտ պատասխանը լինի, որը գրելով միավոր չեք կորցնի:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը նախատեսված են սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված նաև ձեր քննական միավորը:

Քննության ողջ ընթացքում կարգապահ եղեք, մի՛ խոսեք և մի՛ խանգարեք ուրիշներին:

Սխալների ուղղման բաժնի համապատասխան վանդակում անհրաժեշտ է նշել փոխված պատասխանների քանակը:

Ձևաթուղթն անհրաժեշտ է լրացնել խնամքով՝ ուշադրությամբ հետևելով վերոհիշյալ ցուցումներին:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական թեստի բոլոր առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել ճիշտ պատասխանի ընտրությանը:

Հիշեք, որ առաջարկվող պատասխաններից միայն մեկն է առաջադրանքի ճիշտ պատասխանը, մյուսները՝ սխալ:

Հաշվի առեք, որ առաջադրանքները մի դեպքում պահանջում են որևէ իրողություն ճիշտ ներկայացնող տարբերակը գտնել, մյուս դեպքում՝ սխալը: Դրա համար մի առաջադրանքից մյուսին անցնելիս եղեք ուշադիր:

Աշխատեք խելամիտ օգտագործել ժամանակը: Թեստը կատարելու համար ձեզ սահմանափակ ժամանակ է տրվում: Քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են և կատարման համար տարբեր ժամանակ են պահանջում, պետք է կարողանաք ժամանակը ճիշտ բաշխել:

Ժամանակ մի վատնեք երկար մտածելով այն հարցերի շուրջ, որոնց չեք կարող անմիջապես պատասխանել:

Կատարեք այն առաջադրանքները, որոնց պատասխանները հաստատ գիտեք: Այդպես դուք ավելորդ ժամանակ չեք վատնի, չեք կորցնի ժամանակի զգացողությունը և թեստի՝ ձեր իմացած մյուս հարցերին պատասխանելու հնարավորությունը: Երբ պատասխանեք ձեր իմացած բոլոր հարցերին, վերադարձեք բաց թողած առաջադրանքներին:

Երբ տեսնում եք, որ ժամանակը մոտենում է ավարտին, և դուք վստահ չգիտեք առաջադրանքի ճիշտ պատասխանը, ընտրեք ձեր կարծիքով առավել հավանականը: Հիշեք, որ թե՛ պատասխանը չնշելու և թե՛ սխալ պատասխանի դեպքում դուք պարզապես միավոր չեք ստանում: Բայց հնարավոր է, որ ձեր կասկածներն անհիմն լինեն, և առավել հավանական թվացող





## ՆԱԽԱԲԱՆ

Անգլերենի քննության միասնական թեստը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասը (Ա մակարդակ) նախատեսված է հանրակրթական դպրոցի շրջանավարտների համար: Այն բաղկացած է 50 ենթաառաջադրանքներից, որոնք ամփոփված են 8 առաջադրանքներում: Դրանք ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, այսինքն՝ տրված է 4 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը կատարված է համարվում, եթե քննություն հանձնողի ընտրած պատասխանը համընկնում է ճիշտ պատասխանի հետ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:

Թեստի երկրորդ մասը (Բ մակարդակ) բաղկացած է 30 ենթաառաջադրանքներից՝ ամփոփված 4 առաջադրանքներում: Դրանք նույնպես ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Այդ առաջադրանքների կատարման համար պահանջվում է դպրոցական ծրագրում ընդգրկված նյութի առավել խոր իմացություն:

Միասնական Ա և Բ մակարդակները նախատեսված են նրանց համար, ովքեր մտադիր են կրթությունը շարունակել այն բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ անգլերենի իմացությունը ընդունելության մրցույթին մասնակցելու պահանջներից մեկն է:

Ուղեցույցում տրված է թեստի նկարագիրը, բացատրություններ, խորհուրդներ, ցուցումներ:

Անգլերենի պետական ավարտական և միասնական քննության թեստի առաջադրանքներով ստուգվում են քննություն հանձնողի հենքային գիտելիքները, այն ընդգրկում է անգլերենի բոլոր բաժինները: Առաջադրանքները կազմված են դպրոցական ծրագրի հիման վրա:

Առաջադրանքները կատարելուց հետո քննություն հանձնողը պատասխանները պետք է նշի պատասխանների ձևաթղթում:

Անգլերենի պետական ավարտական և միասնական քննության թեստի պատասխանների ձևաթուղթը ստուգվում է համակարգչի միջոցով:

Անգլերենի պետական ավարտական և միասնական քննության թեստի առաջադրանքների կատարման համար նախատեսվում է գիտելիքների հետևյալ ծավալը.

**Բառակազմություն**

Ածանցում և բառաբարդում, անգլերենի առավել տարածված գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ, բայական վերջածանցներ և նախածանցներ:

**Ձևաբանություն**

Գոյական անուն. թիվ, հոլով:

Յոդ. անորոշ, որոշյալ, զրո հոդ:

Ածական անուն. ածականի համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները, համեմատական կառուցվածքները:

Թվական անուն. քանակական և դասական թվականներ:

Դերանուն. անձնական, ստացական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցական, հարաբերական, անդրադարձ, փոխադարձ:

Բայ. բայի հիմնական ձևերը, կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր և բայ-հանգույց:

Բայի ժամանակները (Present, Past, Future, Future in the Past) և ժամանակային խմբերը (Indefinite, Continuous, Perfect, Perfect Continuous): Ժամանակների համաձայնեցում:

Բայի եղանակը (Indicative, Imperative, Subjunctive), բայի սեռը (the Active Voice, the Passive Voice).

Բայի անդեմ ձևերը (Infinitive, Gerund, Participle I, Participle II):

Եղանակավորող բայեր. իմաստներն ու գործածությունը (can/could, may/might, must, ինչպես նաև need, to be able to, to have to, to be to, should, need, ought to):

Մակբայ. մակբայի տեսակները, համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները:

Նախդիր. նախդիրների գործածությունն ըստ իմաստի:

Շաղկապ. համադասական և ստորադասական շաղկապներ:

**Շարահյուսություն**

Նախադասության տիպերն ըստ կազմության. պարզ (համառոտ և ընդարձակ) նախադասություններ, բարդ (համադասական և ստորադասական) նախադասություններ,





## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պետական ավարտական և միասնական քննության թեստում ընդգրկված առաջադրանքների պատասխանները նշվում են համապատասխան ձևաթղթում:

Ձևաթուղթը լրացվում է **միայն սև գելային գրիչով:**

Առաջադրանքներում ընդգրկված են ենթաառաջադրանքներ: Թվերով նշված է տվյալ առաջադրանքում ընդգրկված ենթաառաջադրանքի հերթական համարը, իսկ տառերով՝ պատասխանների տարբերակները (a, b, c, d): Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի պատասխան պետք է գրել դրան համապատասխանող թվի սյունակում (1, 2, 3, 4…)՝ համապատասխան տառի դիմաց:




Սխալվելու դեպքում քննություն հանձնողը հնարավորություն ունի կատարել 3 ուղղում Ա մակարդակում և 2 ուղղում Բ մակարդակում: Ուղղումների համար նախատեսված հատվածում վերևի 2 մեծ վանդակներում գրվում է այն ենթաառաջադրանքի համարը, որի պատասխանն ուղղվում է:

Օրինակ, եթե պատասխանների ձևաթղթում ճիշտ տարբերակի փոխարեն սխալմամբ նշվել է b տարբերակը, ապա սխալների ուղղման բաժնում ճիշտ պատասխանը պետք է նշվի հետևյալ ձևով.



## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ








գլխավոր և երկրորդական նախադասություններ, երկրորդական նախադասության տիպերը: Նախադասությունների դասակարգումն ըստ նպատակի (պատմողական, հարցական, ժխտական) և դրանց շարադասությունը: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Անդեմ նախադասություններ: Հարցական նախադասությունների տիպերը (General, Special, Alternative, Disjunctive): Ենթակայի և ստորոգյալի համաձայնեցում:

Ուղղակի և անուղղակի խոսք, կազմության առանձնահատկությունները:

# ԹԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## Ա մակարդակ

**I. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին՝ ընտրելով ճիշտ տարբերակը:**

Առաջադրանքում տրված է տեքստ: Այդ առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում են շրջանավարտի գրավոր խոսքի ընկալումը, կապակցված տեքստի բովանդակությունը հասկանալու կարողությունը: Տրված հարցերով ստուգվում են տեքստի հիմնական միտքը և իմաստը ըմբռնելու կարողությունները, նախադասության միտքը և բառերը հասկանալու շրջանավարտի ունակությունը:

Line number

September is the ninth month of the year. However, the word *September* comes from the Latin word *septem*, which means “seven.” This is because long ago a different calendar was used in which September was indeed the seventh month.

When Julius Caesar, leader of Rome, changed the calendar, he made September the ninth month.

September is a time of change. With autumn and winter approaching, temperatures usually begin to drop somewhat. It is also a productive time of the year since this is when farmers ***harvest*** some of their vegetables and fruit, especially apples, which have finished their growing season.

September has thirty days. The ***major*** US holiday in September is Labour Day. This holiday, which comes on the first Monday of the month, is in honour of all people who work. September the seventh is Brazil’s Independence Day and Chile’s is the eighteenth. Armenia’s Independence Day is September the twenty-first.

1. The main idea for paragraph 1 (lines 1-5) is

   a) the name for September means “seven” because it is the seventh month of the year





This is a very important contract. __________ , we recommend that you review it with a lawyer.

a) Therefore
b) Despite
c) Whereas
d) Due to

**XI. Կարդալ տեքստը և ընտրել բովանդակությանը համապատասխանող բառը:**

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է կապակցված տեքստի բովանդակությունը հասկանալու շրջանավարտի կարողությունը: Պետք է ուշադիր կարդալ տեքստը և ընտրել բովանդակությանը համապատասխանող բառը:

The world’s first surviving photograph was taken in 1827 by a Frenchman called Niepce. He pointed his camera at the window of his country home and produced an image. It wasn’t very (1) ___________, but the image still survives to this day.

a) certain
b) shiny
c) smooth
d) clear

**XII. Գտնել ավելորդ բառը:**

Առաջադրանքում ներառված են դպրոցական ծրագրում ընդգրկված քերականական կարևոր երևույթներից մի քանիսը: Այն հնարավորություն է տալիս դրանք ստուգելու առավել ամփոփ ձևով: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել և նշել ավելորդ բառը: Առաջադրանքը կատարվում է ընտրովի պատասխանների մեթոդով:

John <u>must</u> have <u>been</u> <u>gone</u> downtown by train as his car was in <u>the</u> garage.

a) must
b) been
c) gone
d) the

d) areas

10. Which of the following sentences does **NOT** reflect the idea of the following sentence from the text:
*Apple trees do best in areas that have very cold winters.*
   a) Apple trees grow better in the parts of the world that are cold.
   b) Very cold winters make apple trees grow better.
   c) Cold winter areas are useful for apple trees.
   d) Very cold winters can be harmful for apple trees.

**X. Ընտրել նախադասության բովանդակությանը համապատասխանող տարբերակը:**

Առաջադրանքը հիմնված է հետևյալ քերականական նյութի վրա. բարդ (համադասական և ստորադասական) նախադասություններ, գլխավոր և երկրորդական նախադասություններ, երկրորդական նախադասության տիպեր, շաղկապներ: Ստուգվում են նախադասությունը տրամաբանորեն և քերականորեն ճիշտ ավարտելու, բարդ ստորադասական նախադասությունները ճիշտ համադրելու շրջանավարտի հմտությունները: Առաջադրանքը կատարվում է բազմակի ընտրության մեթոդով՝ նախադասությունները ճիշտ ավարտելու և շաղկապների ճիշտ տեղադրման միջոցով:

"__________________________about the eight o'clock flight to London?"

"Not yet."

a) Has been an announcement made
b) Has an announcement made
c) Has an announcement been made
d) Has been made an announcement



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

b) the word September refers to the month's place in the old calendar
c) the Latin word "septem" is translated into English as "seven"
d) Julius Caesar, leader of Rome, made the seventh month of the year longer

2. The word ***harvest*** in line 11 means
   a) clean
   b) grow
   c) collect
   d) sell

3. The word ***major*** in line 14 means
   a) free
   b) important
   c) proper
   d) necessary

4. September 18 is an important day in
   a) Brazil
   b) Chile
   c) the US
   d) Armenia

5. According to paragraph 3, (lines 14-19).
   a) Labour Day is celebrated on the first Monday of every month
   b) Brazil and Chile celebrate Independence Day on the same day
   c) Brazil and Armenia celebrate some of their holidays in September
   d) Chile became independent before Brazil

**II. Տեքստում բաց են թողնված նախադասություններ: Լրացնել տեքստը՝ տեղադրելով համապատասխան նախադասությունը:**

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է կապակցված տեքստի բովանդակությունը հասկանալու շրջանավարտի կարողությունը: Անհրաժեշտ է ճիշտ ընտրել համատեքստից դուրս մնացած նախադասությունը:

Edmund Hillary was the first man to stand on top of the highest peak in the world. He was born in New Zealand and had no experience with mountains until he was twenty.
1. ______________ From then on he spent his holidays climbing. In 1950, Hillary went to England to meet mountain climbers and climb with English mountaineers.

1. a) It was then that he became a world expert overnight.
   b) That year he visited New Zealand's Mt. Cook National park, hired a guide and made the climb.
   c) By that time he had already learnt how to climb.
   d) Then he moved to New Zealand and devoted himself to mountaineering.

**III, IV, V** առաջադրանքների միջոցով, ընտրովի պատասխանների մեթոդով ստուգվում են շրջանավարտի ծևաբանական գիտելիքները:

**III** առաջադրանքում ընդգրկված է հետևյալ քերականա-կան նյութը. բայ. բայի հիմնական ձևերը, կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր և բայ-հանգույց, բայի ժամանակները (Present, Past, Future, Future in the Past) և ժամանակային խմբերը (Indefinite, Continuous, Perfect, Perfect Continuous), բայի սեռը (the Active Voice, the Passive Voice), ժամանակների համաձայնեցումը: Նյութը ստուգվում է համատեքստերի միջոցով, ինչը նպաստում է ճիշտ ընտրություն կատարելուն:





4. In general, apples have the same
   a) percentage of water
   b) colour
   c) size
   d) taste

5. We may conclude that McIntosh apples are
   a) smaller than Delicious apples
   b) sweeter than Golden Delicious apples
   c) cheaper than most other kinds of apples
   d) grown only in the United States

6. The main idea of paragraph 3 (lines 10-14) is
   a) Delicious apples are the largest of all apples
   b) apples have different colour, size and flavour
   c) the color, size and flavour of apples are similar
   d) vinegar is made from only sour apples

7. The word ***somewhat*** in line 11 means
   a) some things
   b) more or less
   c) a lot
   d) not at all

8. The word ***sour*** in line 13 means
   a) fresh
   b) delicious
   c) not sweet
   d) not wanted

9. The word ***they*** in line 15 stands for
   a) metres
   b) apple trees
   c) cold winters

areas. The leading countries in apple production are the former Soviet republics, the United States and France.

There are thousands of varieties of apples, but a very few make up the majority of those grown for sale. The three most common varieties grown in the United States are Delicious, Golden Delicious, and McIntosh.

Apples vary in colour, size and taste. The colour of the skin may be red, green, or yellow. They vary ***somewhat*** in size, with Delicious apples being among the largest. The flavour may be sweet or ***sour***. In general, sweet apples are eaten fresh while tart apples are used to make applesauce and vinegar.

Apple trees may grow as tall as twelve metres. ***They*** do best in areas that have very cold winters. Although the tree does not give any fruit during the winter, this cold period is useful for the tree.

1. The author suggests that people like apples because they

   a) taste good
   b) are around 85 percent water
   c) have many varieties
   d) grow in many areas

2. We may conclude from paragraph 1 (lines 1-5) that in the former Soviet republics, the US, and France

   a) more apples are grown than in other countries
   b) fewer apples are grown than in other countries
   c) apple production is the same as in other countries
   d) apple production is not developed

3. Most apples grown for sale

   a) come from many apple varieties
   b) come from several apple varieties
   c) are sweet in taste
   d) are of the same color



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

The dark grey clouds filled the sky rapidly as John was walking home. The noise of the thunder (1) ________ louder and louder. In the distance, John saw his wife and children who (2) ________ the terrible noise and had run to the front door. As soon as he reached them, John (3) ________ them down to the storm cellar where they waited impatiently for the storm to calm down.

1. a) is getting b) was getting c) had gotten d) gets
2. a) heard b) hear c) were hearing d) had heard
3. a) led b) lead c) was leading d) had led

## IV. Ընտրել նախադասության բովանդակությանը համապատասխանող տարբերակը:

Առաջադրանքում ընդգրկված է հետևյալ քերականական նյութը. բայի անդեմ ձևեր (Infinitive, Gerund, Participle I, Participle II), գոյական անուն. թիվ, հոլով, ածական անուն. ածականի համեմատության աստիճանները և դրանց կազմության առանձնահատկությունները, համեմատական կառուցվածքներ, թվական անուն. քանակական և դասական թվականներ, դերանուն. անձնական, ստացական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցական, հարաբերական, անդրադարձ, փոխադարձ, մակբայ. մակբայի տեսակները, համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները: Նյութը ստուգվում է կապակցված կարճ երկխոսություններով, ինչը նպաստում է ճիշտ ընտրություն կատարելուն:

"What did you think of Frank's new project?"
"The more we heard about it, _______ we got."

a) the most enthusiastic
b) more enthusiastic
c) enthusiastically
d) the more enthusiastic

## V. Ընտրել համատեքստին համապատասխանող ձևը:

Առաջադրանքում ընդգրկված է հետևյալ քերականական նյութը. եղանակավորող բայեր. իմաստներն ու գործածությունը (can/could, may/might, must, ինչպես նաև need, to be able to, to have to, to be to, should, need, ought to), նախդիր. նախդիրների

գործածությունն ըստ իմաստի, հոդ. անորոշ, որոշյալ, զրո հոդ: Նյութը ստուգվում է փոքրիկ համատեքստերով ինչը նպաստում է ճիշտ ընտրություն կատարելուն:

A new robot has recently been developed by Sony. This robot (1)_____ dance to any music. (2)______ robot almost never falls (3)_______. It has the ability to talk, (4)______ a vocabulary of 60 000 words.

1. a) able to b) could c) may d) can
2. a) an b) --- c) the d) a
3. a) up b) down c) on d) in
4. a) to b) with c) at d) from

## VI. Ընտրել համատեքստին համապատասխանող խոսքիմասային ձևը:

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է շրջանավարտի բառագիտական գիտելիքները: Բառակազմություն. ածանցում և բառաբարդում, անգլերենի առավել տարածված գոյականակերտ, ածականակերտ, բայականակերտ, մակբայակերտ, բայական վերջածանցներ և նախածանցներ: Համատեքստը ընձեռում է հստակ կողմնորոշվելու հնարավորություն:

In ancient Greece running had a special importance at the opening event of the Olympics and was part of all public games. (1)______runners were greatly respected and received the (2)______rewards.

1. a) success b) successfully c) succeed d) successful
2. a) high b) highly c) highest d) height

## VII. Նշել, թե ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է ուղղակի և անուղղակի խոսքի կազմության առանձնահատկությունները ճանաչելու շրջանավարտի կարողությունը:

The teacher said, “Peter, bring a piece of chalk, please.”

a) The teacher asked Peter to bring a piece of chalk.
b) The teacher said Peter to bring a piece of chalk.
c) The teacher told to Peter to bring a piece of chalk.
d) The teacher said that Peter had to bring a piece of chalk.

## VIII. Նշել, թե հետևյալ հարցերից որո՞նք են քերականորեն ճիշտ:

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է հարցական նախադասությունների տիպերը (General, Special, Alternative, Disjunctive) և դրանց շարադասությունը ճանաչելու շրջանավարտի կարողությունը:

Which of the following questions is correctly formulated?

a) Did he tell you where had landed the plane?
b) Did he tell you the plane has landed where?
c) Did he tell you where has the plane landed?
d) Did he tell you where the plane had landed?

### Բ մակարդակ

## IX. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին՝ ընտրելով ճիշտ տարբերակը:

Առաջադրանքով (ընտրովի պատասխանների մեթոդով) ստուգվում է շրջանավարտի կողմից գրավոր խոսքի ընկալումը: Ընդգրկված հարցերով ստուգվում է տեքստի հիմնական միտքը և մանրամասները ճանաչելու, նախադասության միտքը և բառապաշարը հասկանալու, վերաբերականը գտնելու նրա ունակությունը: Ներառված են նաև եզրահանգումներ անելու հմտությունը ստուգող հարցեր:

Line number

For thousands of years, man has enjoyed the delicious taste of apples. Apples, which are about 85 percent water, grow almost everywhere in the world except the hottest and coldest